

---

---

**ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՄԵՍ ՍԵՔԱՍՏԱՑՈՒ  
ԱԹՈՌԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԺՈՂՈՎԸ**

**ԹԻՆՈՑԱՆ Դ. Ֆ.**

Ներսես Մեքաստացու գործունեության ժամանակաշրջանը համընկավ հայ հոգևոր երկու հաստատությունների՝ Կիլիկիո և Էջմիածնի կաթողիկոսությունների միջև առկա խնդիրների սրացման հետ: Էջմիածնի Փիլիպոս կաթողիկոսի և Ներսեսի նախորդ Միմեոն Մեքաստացու հարաբերությունները ծայրաստիճան սրված վիճակում էին, որն, անշուշտ, իր բացասական հետևանքն էր թողնում հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի վրա<sup>1</sup>: Ուստի, պատահական չէ, որ այթողակալման սկզբից նեթ Ներսեսը ձեռնամուխ եղավ այդ խնդրի հարթեցմանը: Վերջինս, ինչպես և իր նախորդ կաթողիկոս Միմեոնը, Մեքաստիայից էր: Ներսեսը, ինչպես գրում է ժամանակակից պատմիչ Գրիգոր Դարանաղցին (անձամբ ծանոթ է եղել նրա հետ), երիտասարդ հասակում կորցնելով կնոջը՝ գալիս է Միս, աշակերտում սկզբում Հովհաննես Անթեպցի, ապա և Մինաս կաթողիկոսներին<sup>2</sup>: Այդուհետև ստանալով եպիսկոպոսական աստիճան, ըստ Բ. Կյուլեսերյանի ենթադրության, անցնում է Կոստանդնուպոլիս: 1633 թ. տեղի է ունենում մի իրադարձություն, որը, մեր կարծիքով, լիովին բնորոշում է Ներսեսի՝ հայ հոգևորականի կերպարը: Գրիգոր Կեսարացին, որի ձեռքում էր գտնվում Կիլիկիո աթոռի կաթողիկոսական ընտրությունների ղեկավարումը, առաջադրեց Ներսես Մեքաստացի վարդապետի թեկնածությունը: Այնքան մեծ էր վերջինիս հեղինակությունը եկեղեցական ժողովի մասնակիցների մեջ, որ նրանք առաջարկն ընդունեցին առանց որևէ առարկության: Սակայն Գր. Կեսարացին առաջ քաշեց պահանջ, ըստ որի, նոր կաթողիկոսը պետք է պարտավորվեր առանց իր համաձայնության և հրամանի որևէ գործունեություն չձեռնարկել: Այս պահանջի կատարմամբ Ներսեսի կաթողիկոսությունը փաստացիորեն կվերածվեր ձևական կառավարման: Ուստի և Ներսեսը հրաժարվեց կաթողիկոսական աթոռից՝ նշելով. «...յորժամ բան եւ գործ կատարելու լինայ, որ արժանն է, եւ զինքդ յուր գտանիցեմ. եւ այս կերպիւ հակառակութեան բան էարկ ի միջի որ խափանեաց»<sup>3</sup>: Մեքաստիայի

---

<sup>1</sup> Այդ հարաբերությունների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս **Թինո-յան Դ.**, Կիլիկիո կաթողիկոսության հարաբերությունները Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսության հետ Միմեոն Մեքաստացու այթողակալման շրջանում (Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, N 3):

<sup>2</sup> Ժամանակագրությիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղեցոյ, Երուսաղէմ, 1915, էջ 337 (այսուհետև՝ Դարանաղցի): Ցավոք, այս տեղեկությունը հնարավորություն չի տալիս պարզել նրա ծննդյան գեթ մոտավոր թվականը:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 337:

թեմի առաջնորդ Ներսեսը օծվում է միայն 1637 թ., տեղի Անդրեաս եպիսկոպոսի մահից հետո: Չնայած դրան, կարծում ենք, որ 1632- 1637 թթ. ընթացքում նա Ներսեսի ազդեցությունը թեմական գործերում մեծ է եղել: Դրա մասին են վկայում նրա թեկնածության առաջադրումը 1633 թ. Կիլիկիո նվիրապետության աթոռին և իրականացրած բուռն հասարակական գործունեությունը թեմում: Սեբաստիայում պաշտոնավարման շրջանի վերաբերյալ երկու հետաքրքիր հիշատակություններ կան պահպանված: Առաջինը, որը ներկայացրել է Գ. վրդ. Սրվանձտյանցը, Սեբաստիայի փոքր մզկիթի պատմությունն է: Այն ժամանակին եղել է Ս. Գր. Լուսավորիչ հայկական եկեղեցի, որը, բռնագրավվելով մահմեդական հոգևորականության կողմից, վերածվում է մզկիթի: Ըստ հեղինակի, եկեղեցին քրիստոնյաներին վերադարձնելու խնդրանքով Բաղդադից վերադարձող և Սեբաստիայում գտնվող Մուրադ IV-ին է դիմում Ներսես կաթողիկոսը: Մուլթանը, չցանկանալով մերժել նրան՝ այն վերադարձնելու փոխարեն իրավունք է տալիս յոթ եկեղեցի կառուցել, որոնցից մեկը կառուցվում է Սեբաստիայում, վեցը՝ շրջակա գյուղերում<sup>4</sup>: Մյուս վկայության համաձայն, Ներսես վարդապետ Սեբաստացին 1634 թ. մայիսին, օգտվելով Մուրադի՝ Սեբաստիայում լինելու հանգամանքից, կարողանում է նրանից իրավունք կորզել քաղաքում գտնվող Սբ. Սարգսի մատուռը և Ս. Նշանի վանքը նորոգելու համար. «...Եւ հրաման եղէւ նորոգման Ս. Նշանի վանացն եւ Ս. Սարգսի եկեղեցոյս. գոր բազում աշխատութեամբ եւ մեծաւ ջանիւ Սեբաստացի Ներսես վարդապետն վերստին կանգնեաց եւ նորոգեաց...»<sup>5</sup>: Այս երկու իրադարձությունները, անշուշտ, մեկ իրադարձության ձևափոխված վկայություններն են: Իհարկե, այստեղ խոսքը 1630 թթ. I կեսի մասին է, չնայած որ հիշատակագիրը առաջին հիշատակության մեջ Ներսեսի մասին խոսում է որպես կաթողիկոսի, այնուամենայնիվ, դա չէր կարող լինել 1648 թ. հետո, քանի որ Մուրադ IV-ը կառավարել է մինչև 1640 թ.: Չնայած ականավոր հետազոտող Բ. Կյուլեսերյանի կատարած իրոք հսկայական աշխատանքին, պետք է ասել, որ նշելով Ներսեսի աթոռակալման մասին՝ նա զարմանալիորեն որևէ կերպ չի ակնարկում, թե 1648 թ. կաթողիկոս օծված Ներսեսը և 1633 թ. հիշատակված Սեբաստացի վարդապետ Ներսեսը նույն անձինք են: Ասվածի ապացույց կարող է ծառայել 1645-ով թվագրվող՝ Առաքել Դավրիժեցու վկայությունը Էջմիածնում օրհնրված մեռոնը բաժանելու նպատակով իր՝ օսմանյան տիրույթներ այցի մասին: Ըստ նրա, ինքը Փիլիպոս կաթողիկոսի հրահանգով

<sup>4</sup> Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), գրեց Բարգէն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ (այսուհետև՝ Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ), Անթիլիաս, 1939, սյուն. 305, 342:

<sup>5</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, Ե., 1978, էջ 679: Բ. Կյուլեսերյանը սուլթանի այցելության և եկեղացական շինությունների վերանորոգման այլ՝ 1635 թ. է նշում (տե՛ս Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն. 342):

ժամանում է Ամասիա, ուր և հանդիպում է Ներսես վարդապետին. «Եւ եղև հասանել մեր ի քաղաքն Ամասիայ յորում ամի էր եւ թուականն մեր ՌՂԴ (1645) պատահեցաւ անդ լինել և Սեբաստացի Ներսես վարդապետին, որ յետոյ եղև կաթողիկոս Սսայ»<sup>6</sup>: Ապա Դավրիժեցին նշում է. «Եւ որ ի բազում աւուրս ի կարգս գրուցատրութեան»<sup>7</sup>: Այստեղ Դավրիժեցին անուղղակիորեն վկայում է Ներսեսի մեծ հեղինակության և գիտելիքների մասին: Երկու հոգևորականների բանավեճի հիմնական թեման է դառնում Լուսավորչի Աջը: Երբ Առաքել Դավրիժեցին պնդում է, որ Էջմիածնում գտնվող աջը իրոք պատկանում Գ. Լուսավորչին, Ներսեսը նշում է. «Բնակիչք կաթողիկոսարանին Սսայ ասեն՝ թէ ստուգիւ և հաւաստեաւ Աջն սուրբ Լուսաւորչին այն է, որ ի Սիս է, և բերին վկայ ստուգութեան նորին զայն բանն, որ ի շարադրութիւնս հայրապետաց գրեալ է վասն Ստեփաննոսի հայրապետին և վասն Լուսաւորչի Աջին»: Ապա ներկայացվում է 1292 թ. Հռոմկլայի գրավմանը և Աջի՝ մամլուքների կողմից գերեվարմանը և դրա՝ Սիս վերադարձնելու պատմությունը: Այնուհետև Ներսեսը նշում է. «Արդ՝ նոքա այսու վկայութեամբս ասեն, թէ այն Աջն, որ ի Սիս էր, ստուգիւ այն է Աջն սրբոյ Լուսաւորչին, իսկ զայդ Աջոյ, զոր արդ ունիք յԷջմիածին. որպէս գիտէք, թէ այդ Աջն է. եթէ ունիք վկայութիւն ի նախնեաց վասն դորին, ցուցէք»: Ի պատասխան սրա Դավրիժեցին ինքն է թվարկում մոտ մեկ տասնյակ հիշատակարաններ ու վկայություններ, որտեղ նշվում է, որ Էջմիածնական աջը իրապես Լուսավորչի Աջն է: «...բայց բազում հոգաբարձութեամբ հետնեցաք գտանել վկայութիւն ի գրոց, ոչ թէ վասն մերոյս հաւատոյ հաստատութեան, այլ վասն յայտնելոյ ճշմարտութեանն, և հարցողաց պատասխանատրութեան»<sup>8</sup>: Խորամուխ չլինելով կողմերի առաջ քաշած փաստարկների մեջ՝ նշենք, որ այս փաստը խոսում էր երկու կողմերի միջև առկա մրցակցային հարաբերությունների մասին, որոնք առկա էին նաև 1640 թթ.: Իսկ Ա. Դավրիժեցու՝ Ներսեսի հետ նման կարևոր հարցի շուրջ բանավիճելու փաստը խոսում է վերջինիս՝ Գիլիկոն կաթողիկոսության շրջանակում ունեցած հեղինակության մասին: Ներսեսին գործունեության բավական բարդ ժամանակահատված էր բաժին հասել. իր նախորդի՝ Սիմեոն կաթողիկոսի աթոռակալման շրջանում Էջմիածնի և Գիլիկոն կաթողիկոսությունների փոխհարաբերությունները բավական սրվել էին. երկու կողմերն էլ ամեն գնով փորձում էին վերահաստատել իրենց համահայկական հավակնությունները: Նոր աթոռակալը այդ առումով լուրջ խնդիրների առջև էր կանգնած, որոնք, սակայն, ի պատիվ իրեն հիմնականում հաղթահարվեցին: Ի տարբերություն Սիմեոն Սեբաստացու, Ներսես Սեբաստացու մասին Մ. Օրմանյանը շատ ավելի դրական է արտահայտվում «...աւելի խաղաղասէր (Ներսեսը – Թ. Դ.) եւ խոհական գաղափարներու տէր անձ մըն էր, եւ բարեկարգ յարաբերութեանց

<sup>6</sup>Առաքել Դավրիժեցի, էջ 327:

<sup>7</sup>Նույն տեղում:

<sup>8</sup>Նույն տեղում, էջ 328:

պետքը կը զգար»<sup>9</sup>: Երկու նվիրապետական աթոռների հարաբերությունների կարգավորումը համընկավ Ներսեսի և Փիլիպոս Ամենայն հայոց կաթողիկոսի կատարման շրջանի հետ: Բ. Կյուլեներյանը, հղում անելով Առաքել Դավրիժեցուն և մի շարք այլ հեղինակների, նշում է, որ վերջիններս կարծիք են հայտնել, թե երկու կաթողիկոսների հանդիպումը 1652 թ. Երուսաղեմում գուտ պատահականության արդյունք է<sup>10</sup>:

Այդուհետև Բ. Կյուլեներյանը ժխտում է առաջ քաշված այդ տեսակետը: Սակայն Ա. Դավրիժեցին կաթողիկոսների հանդիպման՝ հանպատրաստից լինելու հանգամանքը որևէ կերպ չի փաստում: Բնքը Փիլիպոսը Երուսաղեմը դիտարկում էր որպես միջանկյալ հանգրվան Կ. Պոլիս գնալու ճանապարհին, որտեղ նա միտք ուներ զբաղվելու տեղի պատրիարքության հարցերով: Անշուշտ, այցելության համար բավական նպաստավոր էր նաև այն, որ պարսկաթուրքական լարված հարաբերություններում 1639 թ. խաղաղության համաձայնագրի ստորագրումից հետո որոշակի անդորր էր իջել: Ավելին, օսմանյան իշխանություններն իրենց տիրույթներում Էջմիածնի վեհափառի անվտանգ անցումն ապահովելու համար, նրա պատվիրակությանը հատուկ պաշտոնյա կցեցին: Բացի անվտանգությունից, այն պետք է ապահովեր նաև տեղական իշխանությունների կողմից պատշաճ ընդունելության կազմակերպումը: Ամենայն հայոց հայրապետի անձի նկատմամբ նման բարձր ուշադրությունը, հարկավ, ունենալով քաղաքական հեռահար նշանակություն, ուներ նաև կաթողիկոսի առաքելության մանրամասներին տեղեկանալու նպատակ:

Գիլիկիո կաթողիկոսի հետ հանդիպումը, անշուշտ, Փիլիպոսի համար մեծ կարևորություն է ներկայացրել, ուստի, պետք է համաձայնվել Մ. Օրմանյանի և Բ. Կյուլեներյանի այն դիտարկման հետ, թե՛ «կ'ենթադրենք որ երկու կաթողիկոսներու կողմէ յառաջագոյն ծրագրուած էր այս հանդիպումը Երուսաղեմի մէջ, անշուշտ, թրղթակցութիւններէ եւ հասկցողութեան մը գալէ յետոյ»<sup>11</sup>: Տ. Սավալանյանը Երուսաղեմի ժողովի նախաձեռնությունը Փիլիպոս կաթողիկոսի կողմից պատճառաբանում է այսպես՝ «...որովհետև Միսի կաթողիկոսները ոտնձգութիւններ կընէին Էջմիածնի իրաւունքներուն»<sup>12</sup>: Կաթողիկոսների հանդիպումը, ապա և դրան հաջորդած եկեղեցական ժողովը տեղի են ունենում Երուսաղեմի Սբ. Հակոբի վանքում: Ըստ Մ. Օր-

<sup>9</sup> Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան (այսուհետև՝ Ազգապատում), Մ. Էջմիածին, 2001, հ. Բ, սյուն. 2658, 2853:

<sup>10</sup> Պատմութիւն կաթողիկոսաց Գիլիկիոյ, սյուն. 344:

<sup>11</sup> Ազգապատում, սյուն. 2854, Պատմութիւն կաթողիկոսաց Գիլիկիոյ, սյուն. 345:

<sup>12</sup> Մաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղեմի, հ. առաջին, Երուսաղեմ, 1931, էջ 587, 594:

մանյանի հաշվումների Փիլիպոս կաթողիկոսը Երուսաղեմ հասած պետք է լիներ 1651 թ. աշնանը<sup>13</sup>:

Մարտիրոս Ղրիմեցին հիշատակում է, որ երկու կաթողիկոսներին հանդիպելու և օրհնություն ստանալու համար Մբ. քաղաքում հավաքվել էին հարյուրից ավելի հոգևորական և հազարից ավելի աշխարհական<sup>14</sup>: Մ. Ղրիմեցին ներկայացնում է եկեղեցական ժողովին մասնակցություն բերած երեսուն հոգևոր գործիչներին: Բացի երկու կաթողիկոսներից, դրան մասնակցում էին Երուսաղեմի պատրիարք Աստվածատուր Տարոնեցին, տասնհինգ վարդապետ, ինքը՝ Մարտիրոս Ղրիմեցին, և տասը եպիսկոպոս, որոնք ներկայացնում էին ինչպես Մսի, այնպես էլ էջմիածնական թեմերը<sup>15</sup>: Ըստ Ա. Դավրիժեցու, «...ժողովն գումարեալ, եկեղեցականք և աշխարհականք, յորս էին գլխաւորք՝ կաթողիկոսն Սսայ տէր Ներսէս, և առաջնորդն Երուսաղէմի Աստուածատուր վարդապետն. միաբանութեամբ խոնարհեցան ի հրամանս հայրապետին Փիլիպոսի, և հաստատեցին կանոնական բանս երեքտասան գլուխ...»<sup>16</sup>: Փաստորեն, բացի երկու աթոռների միջև հարաբերությունները վերականգնելուց, ժողովը լուծել է նաև մի շարք կանոնական խնդիրներ, որոնք ծառայած են եղել հայ եկեղեցու առջև: Ուշագրավ է Ա. Դավրիժեցու մեջբերման այն հատվածը, որտեղ վերջինս նշում է, թե Փիլիպոս կաթողիկոսի գերագահությունը անառարկելիորեն ընդունվել է ներկա հոգևորականների և, որն առավել առարկայական է՝ հենց Ներսէս Սեբաստացու կողմից, իսկ դա, անշուշտ, կարելի է համարել Ամենայն հայոց կաթողիկոսի որոշակի ձեռքբերումը: Ժողովի ընդունած որոշումներում եկեղեցական կանոնական որոշումներն ունենին առավել երկրորդական նշանակություն, շատ ավելի կարևոր էր երկու աթոռների իրավասությունների ճշտումը, որոնց էլ վերաբերում էին ժողովի ընդունած որոշումների սկզբնական կետերը: Այդ առումով կարելի է համաձայնել Մ. Օրմանյանի այն դիտարկման հետ, որ այդ ժողովն ունեցել է ոչ այնքան եկեղեցական կանոնական ժողովի, որքան երկու աթոռների իրավասությունների ճշգրտման նպատակով<sup>17</sup>: Առաջին գլխում նշվում էր՝ «...սէր եւ միաբանութիւն երկուց աթոռոց Կաթողիկոսացն Էջմիածնի և Սսոյ, և իւրաքանչիւր Կաթողիկոս գիւրոյ վիճակի նուիրեալն ձեռնադրեսցէ և մի զայլոց. և թէ դէպ լինիցի զի ձեռնադրեսցէ յայլմէ վիճակէ գոք, յիւրում վիճակին տեղաւորեսցէ զնա. և ձեռնադրեալն՝ թէ յայնմ կաթողիկոսի վիճակէ փոխեսցի յայլ կաթողիկոսի վիճակ, անընդունելի լիցի»: Նման համաձայնություն երկու աթոռների միջև կայացել էր նաև 1638 թ., երբ Երուսաղեմի պատրիարք Գրիգոր

<sup>13</sup> Ազգապատում, սյուն. 2854:

<sup>14</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, Ե., 1984, էջ 522-524:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 329:

<sup>17</sup> Ազգապատում, սյուն. 2859:

Պարոնտերի միջնորդությամբ Սսի կաթողիկոս Միմեոնը և նույն Փիլիպոսը պարտավորվել էին միմյանց պատկանող վիճակներում նշանակումներ չանել: Ընդհանուր առմամբ ընդունվեց տասներեք գլուխ: Թվում էր, թե մեծ ջանքերի գնով ձեռք բերված համաձայնությունը կայուն ու երկարատև կլինի: Սակայն դա արդեն իսկ խախտվեց Միմեոնի կենդանության շրջանում, և այժմ այն վերահաստատելու անհրաժեշտություն էր ի հայտ եկել: Երկրորդ գլուխը ևս առնչվում էր վերոհիշյալ խնդրին. «...զի ինքն նուիրեալն եւս մի համարձակեցի առ այլ կաթողիկոս գնալ՝ թողլով զհարն, այլ առ իւր կաթողիկոսն»: Մրանից կարելի է ենթադրել, թե խնդրո առարկա ժամանակաշրջանում նմանատիպ դեպքերը որքան էին շատացել, որ անհրաժեշտություն էր առաջ եկել դա ներառել համաձայնագրի մեջ: Երրորդ ապա և չորրորդ գլուխներում նշվում էր. «զի թարց խնդրանաց ժողովրդեան եւ վկայական թղթոյ մի ձեռնադրեսցի որ յեպիսկոպոսութիւն... ամենեւին զինչ եւ իցէ պատճառաւ որ եպիսկոպոս զայլոյ վիճակ մի յափշտակեցէ»<sup>18</sup>: Մանավանդ այս կետերը մեծ կարևորություն ունեին, քանզի դրանք Փիլիպոսի և Միմեոն Սեբաստացու հակառակության գլխավոր պատճառներից էին: Կարծում ենք, որ Փիլիպոսն այստեղ ակնարկում էր Անկյուրիայի եպիսկոպոս Թորոսի օժման հետ կապված պատմությունը, երբ Միմեոնը, իր վկայությամբ, անսալով տեղի հայության խնդրանքին՝ մահացած Ղուկաս եպիսկոպոսի փոխարեն եպիսկոպոս է օժում Թորոսին: Սա էլ Փիլիպոսի և Միմեոնի հակառակության հիմնական պատճառներից էր: Չնայած որ պահպանված տեղեկություններ չկան, կարծում ենք՝ նման դեպքեր կրկնվել են նաև 1640 թթ.: Համաձայնության հինգից յոթերորդ գլուխները կրկին վերաբերում էին եպիսկոպոսական նշանակումներին. ըստ այդմ, կողմերը պարտավորվում էին մեկ թեմի տարածքում գերծ մնալ երկու առաջնորդների նշանակումից: Բացի այդ, «զի եպիսկոպոս որ թէ ոչ հրամանաւ կաթողիկոսին, այլ կաշառօք եւ այլազգեաց բռնութեամբ համարձակեալ իշխեսցէ այլոյ վիճակի, լուծցի ի կարգէն»<sup>19</sup>: Այս վերջին կետը հատկապես XV-XVII դդ. հայաբնակ վայրերում, թե՛ Հայաստանում և թե՛ հայկական գաղթօջախներում խիստ տարածված երևույթ էր դարձել: Հաջորդ կետերն արդեն դուրս էին Ամենայն հայոց և Կիլիկիո կաթողիկոսությունների հակադրության ոլորտից և առավելապես ունեին համահայկական նշանակություն: Այսպես, ութերորդ գլխում նշվում էր, որ վարդապետական աստիճան պետք է ստանային այն հոգևորականները, որոնք ունեին համապատասխան գիտելիքներ ու արժանիքներ: Բններորդում նշվում էր. «Բահանայ եւ այլ ժառանգաւոր յիւրմէ եպիսկոպոսէ ընկալցի ձեռնադրութիւն հաւանութեամբ իւրոյ ժողովրդեանն, և թէ ոչ այսպէս, լուծցի ի կարգէն»: Տասներորդում և տասնմեկերորդում խոսվում էր ծխերից ստացվող եկեղեցական հասույթի մասին: Տասներկուերորդ գլուխն արդեն վերաբերում էր ամուսնական կարգին և այդտեղ ամուսնացողների միջև ազգակցական կապը բացառելուն<sup>20</sup>: Ժողովի մասնակիցների ընդունած որոշումները հաստատվեցին, և ինչպես նշում է Դավրիժեցին, «... եւ կամակատար յօժարութեամբ առին զօրինակն եւ տարան յաշխարհն իւրեանց, որ եւ ի բազում տեղիս կայ լիակատար օրինակն այն, եւ իւրեանց տակաւին կան նովին ուխտիւն եւ սիրովն՝ շնորհօքն Քրիստոսի...»<sup>21</sup>: Ցավոք, բացի Ա. Դավրիժեցու հայտնածից, այլ տեղեկություններ չկան պարզելու, թե արդյոք Ներսէսն ընդունե՞ց Փիլիպոսի գերակայությունը: Ա. Դավրիժեցու խոսքերը իր նշանավոր

<sup>18</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 271:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 271:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 271-272:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 272:

աշխատության մեջ շրջանցել և չի հիշատակել նաև Բ. Կյուլեսերյանը: Անշուշտ, Ա. Դավրիժեցին ևս, հանդես գալով «Էջմիածնական» դիրքերից, իր կողմից կարող էր ուղղակիորեն ավելացնել ներքոշարադրյալ այն միտքը, թե Ներսեսը և մյուսները «միաբանութեամբ խոնարհեցան ի հրամանս հայրապետին Փիլիպոսի...»<sup>22</sup>: Սակայն կարծում ենք, որ Ներսեսը, ի տարբերություն իր նախորդի, այդուամենայնիվ, ընդունել է Ամենայն հայոց կաթողիկոսի գերակայությունը Կիլիկիո աթոռի նկատմամբ: Դրա օգտին կարող է խոսել նաև այն հանգամանքը, որ վերադառնալով Կիլիկիա, նա երկար չի մնում այդտեղ: Ըստ Բ. Կյուլեսերյանի, բազում նեղություններ կրելով անհավատներից, նա անցնում է հայրենի Սեբաստիա, որտեղ էլ 1654 թ. մահանում է<sup>23</sup>: Յավոք, Բ. Կյուլեսերյանը չի ներկայացնում այն աղբյուրը, որտեղից վերցրել է Ներսեսի՝ այլահավատներից հալածվելու վերաբերյալ տեղեկությունը: Համենայն դեպս, ճիշտ լինելու դեպքում կարելի է խոսել կաթողիկոսի անկայուն դրության և Փիլիպոսի հետ համաձայնության՝ թեկուզ և գերակայությունը ընդունելու գնով վարկածի հավանականության մասին:

**КИЛИКИЙСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ  
НЕРСЕСА СЕБАСТАЦИ И ИЕРУСАЛИМСКОЕ СОБРАНИЕ**

**ТИНОЯН Д. Ф.**

Резюме

Отношения между Киликийским и Эчмиадзинским католикосатами были весьма напряженными в период правления католикоса Нерсеса Себастаци. Нелицеприятными были также отношения предыдущего киликийского католикоса с Эчмиадзинским католикосатом. К сожалению, мы не располагаем множеством данных о деятельности духовного лидера Киликийского епархиата – Нерсеса Себастаци. Известно, что в период его правления, в 1652 году, было создано Иерусалимское собрание, в котором принимали участие оба католикоса. Это событие способствовало улучшению отношений между двумя католикосатами.

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 270:

<sup>23</sup> Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն. 350: